




Ի. ՏՈՒՐԳԵՆԵՎ

ԲԵԺԻՆ ՄԱՐԳԱԳԵՏԻՆԸ

ՊԵՏՏՐԱՏ

2011-05

891.71 Ը
Տ-96

Ի. ՏՈՒՐԳԵՆԵՎ

ԲԵԺԻՆ ՄԱՐԳԱԳԵՏԻՆԸ

Թարգմ ՍՏ. ԶՈՐՅԱՆ
Նկարները ՊԱՆՈՍՏՈՎԻ

ՊԵՏՅՐԱՏ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՍԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ 1938



34209-62



Հուլիսի գեղեցիկ որ եր, մեկն այն ուրերից, վոր յինում են այն ժամանակ միայն, յերբ յեղանակը կանգնում է յերկար: Վաղ առավոտից յերկինքը պարզ է. արշալույսը չի վառվում հրդեհով. նա բացվում է հեղիկ կարմրությամբ: Արեւը վոչ հրդեհն է, վոչ չիկացած, ինչպես կիզիչ յերաշտի ժամանակ. վոչ էլ գունատ բոսորագույն է, ինչպես փոթորկից առաջ, բայց պայծառ է ու ճաճանչափայլ. նա հանդարտ լողալով գուրս է գալիս մի բարակ, փոքրիկ ամպի տակից, փայլում է թարմացած ու սուզվում նրա մանիշակագույն մեզը: Ձգված ամպիկի վերին բարակ ծայրը չողջողում է մանր ոճերի պսպղոցով. այդ չողջողոցը նման է կոփած արծաթի փայլի... Բայց ահա ժայթքում են կրկին ուրախ ճառագայթները, և խրնդուն ու վեհապանծ, կարծես վեր թռչելով, բարձրանում է հզոր լուսատուն: Կեսուրին մոտ սովորաբար հայտնվում են բազմաթիվ կլոր բարձր ամպեր՝ գորշ-վոսկեգույն ու նուրբ սպիտակ յերկնեքով: Անսահմանորեն տարածված գետի մեջ ցրված կղզիների

Նման, վորոնց շուրջը հոսում են հարթ-կապույտ և խոր-թափանցիկ ջրեր, նրանք գրեթե չեն շարժվում իրենց տեղից. հետո դեպի հորիզոնն են գնում նրանք և խմբվում իրար մոտ և նրանց արանքում այլևս կապույտ չի յերևում. բայց նրանք նույնպես լազուր են, ինչպես յերկինքը. նրանք ամբողջովին թափանցված են լույսով և ջերմությամբ: Հորիզոնի թեթև, բացմանիչակազույն տեսքը չի փոխվում ամբողջ ուր և չորս կողմը միատեսակ է. վոչ մի տեղ չի մթնում, փոթորիկը չի խտանում. միայն մի քանի տեղ, վերից վար կապույտ շերտեր են ձգվում. — դա մազում է հազիվ նկատելի անձրևը: Յերեկոյան դեմ այդ ամպերը չքանում են. նրանցից վերջինները՝ սևավուն ու անորոշ, ինչպես ծուխ, վարդազույն քուլաներով պառկում են մայր մտնող արևի դիմաց. այն տեղը, ուր արեվը իջնում է նույնպես հանդարտ, ինչպես հանդարտ բարձրացել եր յերկինք, կարմիր փայլը յերկար չի մընում մթնած յերկրի վրա, և, մեղմ թարթելով, ինչպես խնամքով տարվող մոմ, վառվում է այնտեղ յերեկոյան աստղը: Այդպիսի որերին բոլոր գույները մեղմացած են, պայծառ, բայց վոչ վառ. ամեն ինչի վրա կա մի տեսակ հուզիչ հեղության կնիք: Այդպիսի որերին շուրջ յերբեմն շատ սաստիկ է լինում, յերբեմն նույնիսկ «վառում» է դաշտերը, բայց քամին քշում, ցրիվ է տալիս խտացած տաքությունը, և բոլոր քամին — կանգնած յեղանակի անկասկած նշանը — բարձր սպիտակ սյունով պտտվում է արտերի ճանապարհով: Չոր և մաքուր ողում բուրում են բարձմենակը, հընձած հաճարն ու հնդկացորենը. զիչերամուտին անգամ խոնավություն չէք գգում: Այսպիսի յեղանակ է ցանկանում հողագործը հացի բերքը հավաքելու համար:

Ծիշտ այդպիսի մի ուր՝ յես միջհավ եյի վորսում Տուլայի նահանգի Չերնի դավառում. բավականին լավ վորս արի. լիքը վորսապարկա անգթորեն կտրում եր ուսս. բայց վերջալույսը հանգչում եր արդեն, և դեռ ևս պայծառ, բայց մայր մտած արևի շողերով այլևս

չլուսավորված ողում սկսել եյին թանձրանալ ու տարածվել զով ստվերները, յերբ յես վորոշեցի, վերջապես, վերադառնալ տուն: Արագ քայլերով անցա յերկար տեղ տարածված թփերը, բարձրացա բլուրը և, կաղնի մանր ծառերով լիքը և հեռվում ցածրիկ սպիտակ յեկեղեցի ունեցող հարթության փոխարեն տեսա բուրբուլին այլ, ինձ անծանոթ տեղեր: Առջև ձգվում եր մի նեղ հովիտ. ուղիղ դիմացս դիք պատի պես բարձրանում եր կաղամախինների նոսր պուրակը: Յես տարակուսանքով կանգ առա ու շուրջս նայեցի...

«Եհե՛, — մտածեցի յես, — բուրբուլին ա՛յլ տեղ եմ բնկել. շատ եմ թեքվել դեպի աջ», և, ինքս ելիմ սխալմունքի վրա դարմանալով, արագ-արագ իջա բլրից, ու ինձ անմիջապես մի անախորժ, անշարժ խոնավության մեջ գցացի, կարծես նկուղ եյի մտել. խիտ, բարձր կանաչը՝ հովտի խորքում, ամբողջովին թաց, սպիտակին եր տալիս հարթ սփռուցի պես. այդ կանաչների վրայով քայլելը սարսափելի յեր մի տեսակ: Յես շտապով դուրս յեկա մյուս կողմը, և ձախ բռնելով գնացի, կաղամախինների անտառակի յերկարությամբ: Չզլիկներն արդեն պտտվում եյին նրանց քնած կատարների վերև. պտտվում եյին խորհրդավոր ու դողում մութ-պայծառ յերկնքում. արագ և ուղիղ անցավ վերևից ուշացած մայր բազեն, շտապելով իր բունը:

«Ա՛յ, հենց վոր դուրս դամ այն անկյունը», մտածում եյի ինքս ինձ, «հենց այդտեղ ճամփա կլինի. իսկ յես մի վերատաշափ ավելորդ պտույտ եմ տվել»:

Յես հասա, վերջապես, անտառի պուռնիկը, բայց այնտեղ վոչ մի ճամփա չկար. ինչ-վոր ցածրիկ թուփեր եյին տարածվում առջևս, իսկ նրանց այն կողմը հեռո՛ւ, հեռո՛ւ, յերևում եր ամայի դաշտը: Յես կրկին կանգ առա: «Սա ի՞նչ առակ է... Այս ի՞նչ տեղ եմ յես»: Սկսեցի հիշել՝ ի՞նչպես և ո՛ւր գնացի որվա քնթացքում... «Հա՛, սա Պարախինի թփերն են», —

բացականչեցի, վերջապես. «Ճիշտ վոր. հրեն այն ել, յերևի, Սինդեհի պուրակն ե... Բայց ի՞նչպես այստեղ ընկա: Այսքան հեռու... Տարորինակ ե: Հիմի ելի պետք ե ձախ գնամ»:

Թփերի միջով գնացի դեպի ձախ: Մինչդեռ գիշերը մոտենում եր ու թանձրանում, ինչպես վոթորկաբեր ամպ. թվում եր, յերեկոյան գոլորշիների հետ ամեն կողմից բարձրանում և անգամ վերելից թափվում եր մթությունը: Նկատեցի կանաչով ծածկված մի արահետ. բռնեցի այդ արահետն ու գնացի, ուշադրությամբ առջևս նայելով: Շուրջս ամեն ինչ արագորեն մթնում ու լուծում եր, — միայն լուրերն էյին ճշշում յերբեմն: Գիշերային մի թռչուն, վոր անձայն ու ցած թռչում եր անաղմուկ թևերով՝ համարյա դիպավ ինձ, և վախեցած իրան քցեց մի կողմ: Դուրս յեկա թփերից ու մի միջնակ բռնած գնացի դաշտի միջով: Արդեն դժվարությամբ էյի տարբերում հեռուն գտնվող առարկաները. դաշտն անորոշ սպիտակին եր տալիս չուրջս. նրանցից դենը, յուրաքանչյուր բույս հսկայական քուլաներով բարձրանում եր մռայլ խավարը: Զովացող ոգի մեջ քայլերս հնչում էյին խուլ: Գունատված յերկինքը նորից սկսեց կապտել, — բայց դա արդեն գիշերվա կապույտ եր: Փոքրիկ աստղերը առկաձեցին ու շարժվեցին նրա վրա:

Այն, ինչ ընդունել էյի պուրակի տեղ, պարզվեց, վոր մութ ու կլոր բլուր ե: «Այս վո՞րտեղ եմ, վերջապես», — կրկնեցի դարձյալ, բարձրաձայն, կանգ առա յերրորդ անգամ և հարցական նայեցի իմ անգլիական դեղնախար շանը՝ Դիանկին, վոր ամենախելացին եր բլոր չորքոտանի արարածներից: Բայց չորքոտանի արարածներից ամենախելացին միայն պոչը չարժեց, հոգնած աչքերը թարթեց տխրությամբ և վոչ մի դորձնական խորհուրդ չտվեց ինձ: Յես ամաչեցի նրանից, ու շտապեցի առաջ գնալ. հանկարծ կարծես գլխի ընկա, թե ո՛ւր պիտի գնամ. ջոկեցի բլուրի մյուս կողմը և դուրս յեկա մի վոչ խոր, չորս կողմը

վարած ձորակ: Անմիջապես տարորինակ մի զգացում տիրեց ինձ: Զորակը գրեթե ուղիղ կաթսայի տեսք ունեւ՝ թեք կողերով. հատակին՝ վռաի վրա կանգնած էյին մի քանի մեծ սպիտակ քարեր, — թվում եր նրանք իջել են այդտեղ գաղտնի խորհրդակցելու, — և այնքան խուլ ու համր եր այդ ձորակը, այնքան տափակ, և յերկինքն այնպիսի տխրությամբ եր կախվել նրա վրա, վոր սիրտս ճմլվեց: Մի ինչ վոր փոքրիկ դադան գանգատավոր ծվծվոց բարձրացրեց քարերի արանքում: Շտապեցի յետ դառնալ դեպի բլուրը: Տուն գնալու ճանապարհ գտնելու հույսս դեռ չէյի կտրել. բայց այստեղ վերջնականապես հավաստիացա, վոր մոլորվել եմ բլորովին և, այլևս չաշխատելով ճանաչել ինձ շրջապատող տեղերը, վոր արդեն ծածկվել էյին մեզով, գնացի ինձ համար, աստղերին նայելով... Կես ժամի չափ գնում էյի այդպես, դժվարությամբ վտանքս վտխելով: Թվում եր՝ կյանքումս այսպիսի ամայի տեղեր չես յեղել. վո՛չ կրակ եր յերևում մի տեղ, վո՛չ ել ձայն եր լսվում: Մի բլուր հեռում եր մյուսին, դաշտերն անվերջ ձգվում էյին դաշտերի յետևից, թփերը կարծես հանկարծ դուրս էյին ցցվում գետնից, հենց թիս առջև: Յես շարունակ քայլում էյի և արդեն պատրաստվում էյի թեք ընկել մի վորևե տեղ մինչև առավոտ, յերբ հանկարծ տեսա՝ կանգնած եմ մի սարսափելի անդունդի վրա:

Յես արագ յետ քաշեցի մեկնած վոտս և, գիշերվա մթնշաղի միջով, տեսա հեռվում, ներքևը մի մեծ հարթավայր: Լայն գետը, կիսաշրջան կաղմելով, անցնում եր նրա միջով. ջրի պողպատյա փայլը, վոր հագիվ չողում եր յերբեմն, ցույց եր տալիս նրա ընթացքը: Բլուրը, վորի վրա գտնվում էյի, իջնում եր հանկարծ, գրեթե ուղղահայաց. նրա վիթխարի գծագրությունները, սկին տալով, ջոկվում էյին ոգի կապտավուն պարապությունից, և ուղիղ իմ տակ, բլուրի ուղղահայաց լանջի ծայրին, հենց գետի կողքին, վոր

այդտեղում յերևում եր անշարժ, միմյան հայելու նման, կարմիր բոցերով վառվում ու ծխում ելին միմյանց մոտ յերկու խարույկ: Նրանց չորս կողմը մարդիկ ելին շարժվում, սովերներ ելին որորվում, յերբեմն պայծառ լուսավորվում եր մի փոքրիկ ու խուճուճ գլխի առաջամասը...

Վերջապես իմացա թե ուր եմ ընկել: Այդ մարդագետինը մեր կողմերում հռչակված ե Բեժին - մարդագետին անունով... Բայց վոչ մի հնար չկար տուն վերադառնալու, մանավանդ գիշեր ժամանակ. հոգնածությունից վրաներս թուլացել ելին: Վորոշեցի մոտենալ խարույկներին և այն մարդկանց հետ, փորոնց ընդունեցի չարվադարների տեղ, սպասել լուսաբացին: Բլրի ուղղահայաց լանջով հաջողությամբ իջա ցած, բայց հազիվ ելի բռնածս վերջին թուփը բաց թողել ձեռիցս, յերբ հանկարծ յերկու մեծ, սպիտակ, բրդոտ շուն՝ կատաղի հաջողով վրա պրծան ինձ: Մանկական զրնգուն ձայներ բարձրացան խարույկների շուրջը. յերկու-յերեք փոքրիկ տղա վեր կացան գետնից: Յես արձադանքեցի նրանց հարցական ճիչերին: Նրանք մոտ վազեցին, շներին իսկույն յետ կանչեցին, վորոնց մանավանդ զարմացրեց իմ Դիանկան, յես մոտեցա նրանց:

Յես սխալվել ելի՝ կրակի շուրջը նստոտած մարդկանց չարվադարների տեղ գնելով: Դրանք պարզապես դյուլական յերեխաներ ելին՝ հարևան չենից. ձիեր ելին սրհում: Ամառվա չոգ ժամանակը մեղանում՝ ձիերը գիշերը դուրս են անում դաշտում կերակրվելու, քանի վոր ցերեկը ճանձերն ու բուռերը նրանց հանգիստ չեն տալիս: Զիերին յերեկոյան դեմ դուրս անելը և առավոտ լուսաբացին տուն բերելը մեծ տոն ե գյուղի յերեխաների համար: Անգլխարկ, մի հին կիսամուշտակ հագած՝ նստում են նրանք ամենաթիր, նիհար ձիերի վրա և սլանում ճիչով, աղմուկով, ձեռն ու վոտ թափահարելով, ծուլ են լինում ու զվարթ քրքրվում: Թեթև փոշին բարձրանում ե գեղին սյունով

և տարվում ճանապարհով. համաչափ վռնատրոփը տարածվում ե հեռուն. ձիերը վազում են ականջները խլշած. բոլորի առջևից՝ սուղը ցցած վազում ե մի վարկե բրդոտ շեկ ձի՝ կոծոծները խճճված բաշի մեջ:

Յես տղաներին ասացի, վոր մոլորվել եմ, ու նրատեցի մոտները: Նրանք հարցրին, թե վո՛րտեղացի յեմ, լուեցին, քաշվեցին: Սոսեցինք մի քիչ: Պառկեցի մի թիփ տակ ու սկսեցի գիտել շուրջս: Տեսարանն սքանչելի յեր. խարույկների շուրջը դողդողում և խավաբին դեմ առնելով, կարծես մարում եր կրակի կարմրավուն անդրադարձը. կրակը, բռնկելով, յերբեմն արտացոլումներ եր նետում այդ շրջագծի այն կողմը. լույսի բարակ լեզուն լիզում եր թիփերի մերկ ձղները և արագ չքանում. — սուր, յերկար սովերները, մի ակնթարթ առաջ վազելով, իրենց հերթին, գալիս հասնում ելին կրակներին. խավարը կավում եր լույսի հետ: Յերբեմն, յերբ բոցը թուլել վառվում և լույսի շրջագիծը նեղանում եր, առաջ յեկած խավարի միջից յերեկում եր հանկարծ մի ձիու գլուխ՝ ճակատին մի ձերմակ բիծ, կամ ամբողջովին սպիտակ. ուշագիւր ու բուխ հայացքով նայում ե ձեզ, մի յերկար խոտ ծամելով և, նորից ծածկվում իսկույն: Լավում եր միայն, թե ինչպես ձին շարունակում ե ծամել ու փնչացնել: Լուսավորված տեղից դժվար ե տեսնել, թե ինչ ե կատարվում միմյան մեջ, և այդ պատճառով մոտերքում ամեն ինչ թվում եր սև վարագույրով պատած, բայց հեռուն՝ հորիզոնի կողմը՝ մութ կերպով յերեկում ելին բլուրներն ու անտառները: Միմյան, մաքուր յերկինքը հանգիսավոր ու անսահման բարձր փռված եր նրանց գլխավերև՝ իր ամբողջ խորհրդավորությամբ: Կուրծքս ճնշվում եր քաղցրորեն, չնչելով այն առանձնահատուկ ու թարմ բուրմունքը՝ ուսական ամառ գիշերվա բուրմունքը: Ծուրջս համարյա վո՛չ մի աղմուկ չեմ լսվում... Միայն յերբեմն մոտիկ գետում հանկարծ ճողփում եր մի մեծ ձուկ, գետափի յեղեգը շրջում եր թույլ, ալիքներից որոր-



վերով... Մենակ խարույկներն եյին հանդարտ ճաթ-
ճաթում:

Տղաները նստած եյին նրանց շուրջը, այդտեղ
նստել եյին և այն յերկու շունը, վորոնք քիչ մնաց ինձ
ծվատեյին: Նրանք դեռ յերկար ժամանակ չեյին կարո-
ղանում հաշովել իմ ներկայության հետ և, քնատ աչ-
քերնին կիոցելով և խեթ նայելով կրակին, յերբեմն
մոմոում եյին սեփական արժանապատուության զգա-
ցումով. սկզբում մոմում եյին, ապա թեթեակի
վնդստում, ափսոսելով կարծես, վոր չկարողացան
իրագործել իրենց ցանկությունը: Տղաներն ընդամենը
հինգ հոգի եյին — Ֆեդյան, Պավլուչան, Իլյուչան,
Կոստյան ու Վանյան (նրանց անուններն իմացա նրանց
խոսակցությունից և այժմ մտադիր եմ ծանոթացնել
նրանց ընթերցողին):

Առաջին տղային, վոր ամենից մեծն էր, Ֆեդյա-
յին կարող եյիք համարել տասչորս տարեկան: Դա մի
վայելչակազմ տղա յեր՝ սիրուն ու նուրբ գիմազե-
րով, գանգուր խարոյաչ մազերով, պայծառ աչքերով
և մշտական կես-ուրախ, կես-ցրված ժպիտով: Բոլոր
նշաններից յերեւում էր, վոր հարուստ ընտանիքի զա-
վակ է և դաշտ է յեկել վոչ թե ստիպված, այլ այն-
պես, զվարճության համար: Նրա հաղինը մի նախշուն
չիթ վերնաշապիկ էր՝ դեղին յերիզով. վրան գցել էր
մի նոր կարճ վերնազգեստ, վոր հագիւմ էր պահում
ուսերին. կապույտ գոտուց կախված էր սանրը: Կարճ
ձաքերով կոշիկներն իսկապես իրենն եյին և վոչ թե
հորը: Յերկրորդ տղան՝ Պավլուչան սև խռիւ մազեր
ուներ, մոխրագույն աչքեր. այստակները լայն եյին,
դեմքը գունատ, չեչոտ, բերանը մեծ, բայց կանոնա-
վոր. գլուխը մեծ էր, ինքը կարճիկ ու անդյուրաթեք:
Ինչ խոսք, վոր տղեղ տղա յեր, բայց և այնպես ինձ
դուր յեկավ. շատ խելացի հայացք ուներ, նայում էր



ուղիղ, և բացի դրանից, ձայնի մեջ ույժ եր գդաց-
վում: Նա իր շորերով պարծենալ չէր կարող — ամ-
բողջը՝ մի հասարակ վերնաշապիկ եր և կարկառած
վարտիկ: Յերրորդի՝ Իլյուշայի դեմքը բավականին
աննշան եր. կուսցած յերկար քիթ ուներ, վոր արտա-
հայտում եր ինչ-վոր բույթ, հիվանդոտ հոգացողու-
թյուն. իրար սեղմած չուրթերը՝ չէյին շարժվում, ի-
րար կցած հոնքերը չէյին բաժանվում, — նա շարու-
ակ կարծես աչքերը կկոցում եր կրակից: Նրա
դեղին, գրեթե սպիտակին տվող մազերը սուր-սուր
փնջերով դուրս եյին թափվել թաղիքե գլխարկի տա-
կից, վորը յերկու ձեռքով քաշում եր նա ախանջների
վրա: Նոր տրեխներ ուներ և վոտի վաթաթաններ.
հաստ պարանը, վոր յերեք անգամ պատ եր տվել մեջ-
քով, խնամքով գրկել ել նրա մաքուր սև վերնագդես-
տը: Թե նա, թե Պավլուշան հաղիվ լինեյին տասեփեռ-
տարեկան: Չորրորդը՝ Կոստյան, վոր կլինեք տասր
տարեկան, ինձ հետաքրքրում եր իր խոհուն ու տխուր
նայվածքով: Նրա դեմքը մեծ չէր, նիհար եր, պեպե-
նոտ, ներքին մասը սրված, սկյուռի դեմքի նման:
Շուրթերը հաղիվ եյին նկատվում. բայց տարրինակ
տպավորություն եյին թողնում նրա խոչոր, սև ու
խոնավ փայլ ունեցող աչքերը. նրանք, թվում եր, ու-
ղում եյին ինչ-վոր բանասել, վորի համար լեզուն-դո-
նե նրա լեզուն-խոսք չէր գտնում: Նա փոքրահասակ
եր, նիհար և հագնված եր բավականին աղքատ: Վեր-
ջինին՝ Վանյային, սկզբում քիչ մնաց չնկատեմ ել. նա
պառկած եր դետին և ճիլպով ծածկված. յերբեմն
միայն ճիլպի տակից հանում եր շեկ, խուճուճ գլու-
խը: Այդ տղան կլինեք ընդամենը յոթ տարեկան:

Այսպես ուրեմն, մի թիփի տակ պառկած, նայում
եյի տղաներին: Մի փոքրիկ կաթսա կախված եր խա-
րույկներից մեկի վրա. մեջը «կարտուլ» եյին յեփում:
Կաթսային նայում եր Պավլուշան. գետնին չոքած՝
նա ձեռքի տաշեղը շուտ-շուտ կոխում եր յեփ յեկող ջրի
մեջ: Ֆեդյան պառկել եր՝ արմուկին հենած և վեր-

նազդեստի փեշերը փռած: Իլյուշան նստել եր Կոստյա-
յի կողքին և աչքերը կկոցում եր շարունակ: Կոստյան
գլուխը կախել եր փոքր ինչ և նայում եր հեռուն:
Վանյան չէր շարժվում իր ճիլպի տակ: Յես ձեռ-
յա թե քնած եմ: Կամաց-կամաց տղաները կրկին խո-
սել սկսեցին:

Սկզբում խոսում եյին դեսից-դենից, վաղվա աշ-
խատանքների մասին, ձիերի մասին. բայց հանկարծ
Ֆեդյան դիմեց Իլյուշային և, ընդհատված զրույցը
կարծես վերսկսելով, հարցրեց նրան.

— Հը՛, եղպես ուրեմն քաջը տեսա՞ր հա՛:

— Ձե՛, յես չեմ տեսել. նրան տեսնել չի ել կա-
րելի, — ասաց Իլյուշան խոսքոտ ու թույլ ձայնով, վո-
րի հնչյունը ավելի քան համապատասխանում եր նրա
դեմքի արտահայտության. — Լսել եմ... Մենակ յես
չեմ լսել:

— Բայց նա ձեզ մոտ ի՞նչտեղ ե տպրում:

— Թուղթ թրջելու տեղը:

— Ե, դուք զործարան եք գնո՞ւմ վոր:

— Վո՞նց չե, գնում ենք: Յես ու ախպերս՝ Ավ-
դյուշկան թուղթ դող (հարթող) ենք:

— Տե՛ս հլա — բանվորների՛ս տեսեք...

— Ե, բա վո՞նց նրա ձենը լսեցիր, — հարցրեց Ֆե-
դյան:

— Այ վոնց: Պատահեց մի անգամ յես՝ ախպորս
հետ, մեկ ել Ֆեոդոր Միխեևիու, Իվաչկայի, մեկ ել
կրասնի խորմեցի Իվաչկայի, հետո Սուխորուկով Ի-
վաչկայի հետ, կային ուրիշ տղերք ել, բոլորս կլինե-
յինք տաս հոգի — բոլորս ել յերկրորդ հերթի աշ-
խատողներ, այսինքն՝ վոչ թե ենպես, մեր կամ-
քով պիտի մնայինք, — Նազարովը՝ վերակացուն
չթողեց մեր տները գնանք. ի՞նչ կա, ասում ա,
մեկ ել տուն գնաք, յերեխաներ եք. եզուց շատ
գործ կա ասում ա, տուն մի գնաք: Մենք ել մնացինք
ու բոլորս պառկեցինք մի տեղ. մեկ ել Ավդյուշան
սկսեց, թե ի՞նչ կանեք, տղերք, յեթե հանկարծ քաջք

յերևա... Խոսքը դեռ չէր վերջացրել Ավդեյը, հանկարծ մեկը շարժվեց մեր գլխավերևը. մենք պառկած էինք ներքև, իսկ նա մասն է գալի վերևում, անիվի մոտ: Լսում ենք — մասն է գալի, տախտակները կռահում, ճոճվում են վոտների տակ. անցավ մեկ ել մեր գլխավերևից. ջուրը հանկարծ թափվեց անիվի վրա ու ձենը լցրեց սենյակը. անիվը չխչխկաց ու պտտվեց. իսկ ջրի բերանը վազուց փակած եր: Ջարձանում ենք — ո՞վ փակը բաց արավ, վոր ջուրն յեկավ. բաց անիվը պտտվեց, պտտվեց ու կանգնեց: Նա դնաց ելի դեպի վերևի դուռը, հետո սկսեց նարդիվանով իջնել. կարծես սկի չէր վռազում... Հետո մոտեցավ մեր դռանը, սպասեց, սպասեց — մեկ ել դուռը բացվեց հանկարծ: Վեր թռանք, մտիկ ենք անում — հեչ մարդ չկա... Հանկարծ տեսնենք մեծ ամաններից մինը ժած յեկավ, բարձրացավ, թռավ ոգի մեջ ու պտտվեց, մեկը կարծես վողոզում եր նրան, ու ելի դնաց իրա տեղը: Հետո մի ուրիշ ամանի ունի դուռս յեկավ մեխից ու ելի դնաց — կախվեց այդ մեխից. հետո կարծես մեկը դնաց դեպի դուռը ու հանկարծ ենպես մի հազաց, բողազը քերելով, վռնց վոր վոչխար... Բոլորըս իրար գլխով դիպանք ու մոտեցանք իրար... Ի՞նչ քան վախեցանք, աման, եդ ժամանակ:

— Տե՛ս, — խոսեց Պավլուչան: — Ինչի՞ր յեր հազում վոր:

— Յեսի՛մ. կարելի ա՛ նամությունից եր:

Բոլորը լռեցին:

— Հը, կարտուն յեփե՞ց, — հարցրեց Ֆեդյան:

Պավլուչան մատներով շոշափեց կաթսայի գետնախնձորը:

— Չե, դեռ հում ա... Տես, ելի ճողպաց, — ավելացրեց նա, յերեսը գետի կողմը դարձնելով. — ո՞վ գիտի կողակ ա... Հրե մի աստղ ընկավ:

— Տղեք, ձեզ մի բան պատմեմ, — խոսեց Կոստյան բարակ ձայնով. — լսեցեք ի՞նչ պատմեց հերս ինձ մի քանի որ առաջ:



Պավլուչան

— Հը, լսում ենք,— հովանավորողի տեսքով
ասաց Ֆեդյան:

— Գավրիլին, մեր թաղի դուրգարին ճանաչո՞ւմ
եք, չե:

— Հա՛, ճանաչում ենք:

— Բա գիտե՞ք, թե ինչո՞ւ ա եղպես տխուր ու ին-
չո՞ւ շարունակ չի խոսում. գիտե՞ք: Այ ինչո՞ւ ա
տխուր. մի անգամ դա, հերս ա ասում, գնում ա,
ախպեր ջան, մերին՝ կաղին հավաքելու: Գնում ա կա-
ղին հավաքելու ու ճամփեն կորցնում ա: Աստված գի-
տի, թե վորտեղ ա ընկնում. դես ա գնում, ախպեր
ջան, դեն ա գնում — չե. ճամփա չի գտնում. գիշերն
եւ արգեն կոխում ա: Նստում ա մի ծառի տակ. արի
սպասեմ, ասում ա, առավոտը բացվի:— Նստում ա ու
ննջում: Ննջում ա ու լսում ա հանկարծ, վոր մեկը
կանչում ա իրան: Նայում ա — մարդ չկա: Նորից
ննջում ա — ելի յեն կանչում: Սա նորից նայում ա,
նայում, մեկ եւ տեսնում ա ծառի ճյուղին նստած մի
փերի. որորվում ա ճյուղի վրա ու նրան կանչում
իրա մոտ. կանչում ա ու ծիծաղո՞ւմ, ծիծաղո՞ւմ...
Լուսնյակն եւ լավ լիս ա տալի, ենպես լավ, վոր
ամեն բան յերեւում ա, ախպեր ջան: Եղ փերին կանչում
ա նրան, իսկ ինքը ամբողջ պայծառ, սպիտակ նստել
ծառի ճյուղին, վոնց վոր մի շարմաղ ձուկ, արծաթի
պես պսպղում ա... Դուրգար Գավրիլը մնում ա սա-
ռած, ախպեր ջան, իսկ փերին ելի ծիծաղում ա ու ձե-
ռով կանչում նրան իր մոտ: Են ե Գավրիլը վեր ա կե-
նում, ուզում ա գնա փերու մոտ, բայց, ասածու կամ-
քով խելքի ա գալի — խաչակնքում ա... Բայց ի՞նչ-
քան դժվարությամբ ա խաչ քաշում, տղեք. ասում ե՛
ձեռը վոնց վոր քարից ըլեր, վեր չեր բարձրանում...
Ա՛խ, դու... Հա՛, հենց վոր խաչակնքում ա, ախպեր
ջան, փերիս ծիծաղը կարում ու լաց ա ըլում հան-
կարծ... Լաց ա ըլում, ախպեր ջան, ու աչքերը մաղե-
րով սրբում, իսկ մաղերը կանաչ են, վոնց վոր կաննի:
Նայում ե Գավրիլը, նայում ե նրան ու սկսում հարց

ու փորձ անել. «Ինչի՞ յես լաց ըլում, այ փերի»: Իսկ
փերին պատասխանում ա. «Դու չպետք ե խաչակնքե-
լիր», ասում ա, «ուրախ կապրեյիր ինձ հետ մինչև
կյանքիդ վերջը, իսկ լաց եմ ըլում, տանջվում եմ նրա
համար, վոր խաչ քաշեցիր. բայց մենակ յես չեմ
տանջվելու, դու եւ տանջվիր մինչև կյանքիդ վերջը»:
Եստեղ, ախպեր ջան, եղ փերին չքանում ա. իսկ Գավ-
րիլն իսկույն գլխի ա ընկնում, թե վոնց դուրս դա մե-
րուց... Բայց եղ որվանից եւ աչք-ուկնքը չի բացվում,
տխուր ման ա գալի շարունակ:

— Ասիր ելի՛, — խոսեց Ֆեդյան կարճ լուսթյու-
նից հետո, — եղ վո՞նց կըլի, վոր մերու շարքը փչացնի
քրիստոնյա մարդու հոգին... Ձե՞ վոր Գավրիլը, ա-
սում ես, նրան չլսեց:

— Արի տես, վոր եղպես ա, — ասաց Կոստյան:
— Գավրիլան եւ ասել ա, թե՛ նրա ձենը շատ բարակ
ու տխուր ա ելել:

— Եղ քու հերն ի՞նքն ա պատմել, — շարունակեց
Ֆեդյան:

— Ինքը: Նա պատմում եր՝ յես պառկած լսում
եյի:

— Զարմա՛նք բան ա: Ինչո՞ւ ա Գավրիլը տխրել
վոր... Ուրեմն փերին նրան հավանե՞լ ա, վոր կանչել
ա:

— Այո, հավանել ա, — վրա բերեց Իլյուչան:

— Իհարկե. փերին ուզել ա նրան խուստուտ ածի,
այ ի՛նչ ա ուզել: Եղ հենց փերինների դործն ա:

— Ա՛յ, եստեղ եւ պետք ա վոր փերիններ ըլեն, —
նկատեց Ֆեդյան:

— Ձե՛, — ասաց Կոստյան, — եստեղ մաքուր, ա-
զատ տեղ ա, մենակ գետն ա մոտիկ:

Ի՞նչըրը լուցին: Հանկարծ, հեռվում՝ ինչ-վոր մի
տեղից լավեց մի ձիգ, գիլ, գրեթե հեծող ձայն, մեկը
այն գիշերային անհասկանալի ձայներից, վոր լավում
են յերբեմն խորին լուսթյան մեջ, բարձրանում են,
մնում ողում և դանդաղորեն տարածվում, փերջապես,

34209-62



կարծես մարելով: Ականջ ես դնում, և կարծես վռչինչ չկա, բայց զրնգում ե: Մեկը, կարծես, յերկա՛ր, յերկա՛ր ճչաց հենց հորիզոնի տակ, մի ուրիշը կարծես արձագանք տվեց նրան անտառից՝ բարակ ու սուր քրքիջով, և մի թույլ, շաչող սուլոց անցավ գետնի վար: Տղաներն իրար նայեցին ու վեր թռան:

— Մաչը ոգնական, — չնջաց իւլյան:

— Ի՛, ագռավներ, — ճչաց Պավելը, — ինչի՞ իրար անցաք: Տեսե՛ք, կարտուն եիել ա: (Բուրբը մոտեցան կաթսային և սկսեցին ուտել զուլորչի արձակող գետնախնձորը. մենակ Վանյան չշարժվեց տեղից): Ինչո՞ւ չես վեր կենում, — ասաց Պավելը նրան:

Բայց նա դուրս չեկավ իր ճիւղալի տակից: Կաթսան շուտով ամբողջովին դատարկվեց:

— Բայց լսե՛լ եք, տղեք, սկսեց իւլուչան, — մի քանի ուր առաջ ի՛նչ ա պատահել մեզանում՝ Վարնավիցում:

— Գետի մո՞տ, — հարցրեց Ֆեդյան:

— Հա, քանդված տեղը: Համա վատ տեղ ա հա, ու խուլ: Զորս կողմը փոսեր են, ձորեր, ձորերը լիքը ոճեր:

— Ե, ի՞նչ ա պատահել, ասա տեսներք...

— Ա՛յ ինչ ա պատահել: Դու, Ֆեդյա, շատ կարելի ա չգիտես, բայց ենտեղ ջրում խեղդված մի մարդ ա թաղված. նա խեղդվել ա շատ վաղուց, յերբ գյուլը (լճակը) դեռ խոր ա յեղել, միայն գերեզմանը մինչև հիմա ել յերևում ա, են ել շատ քիչ, մի փոքրիկ թումբ ա... Հա, ես քանի ուր կառավարիչը կանչում ա չնպահ Յերմիլին. ասում ա՝ գնա, մթամ, Յերմիլ, փոշտը (պոստը) բեր: Մեզանում միշտ Յերմիլն ա փոշտի գնում: Վեր ե կենում Յերմիլը գնում փոշտի, բայց քաղաքում ուշանում ա ու յետ գալիս մի քիչ կոնծած ա ըլում: Գիշերն ել պայծառ, լուսավոր գիշեր ա. լուսնակը փայլում ա... Գալիս ա Յերմիլն ու եղ քանդված տեղով անցնում: Գնում ա եղպես չնպահ Յերմիլն ու տեսնում ա հրեա խեղդվածի գերեզ-



Илюша и Костя.



մանի վրա մի դառը, սպիտակ, սիրուն, խուճուճ մա-
զերով— ման ա գալի: Յերմիլը մտածում ա՝ վերցնեմ
տանեմ— ուտեմ, զուր տեղը պտի կորչի,— ձիուց վեր
ա գալի ու գառը վերցնում... Իսկ գառը — հեչ, ձեն
չի հանում: Գնում ա Յերմիլը ձիու մոտ, ձին աչքերը
չռում ա, փնչացնում, գլուխը թափ տալի: Բայց Յեր-
միլը նրան «տպուռ» ա ասում, նստում ա գառը գրկած
ու գնում: Նա գառին ա նայում, գառն էլ ուղիղ նրա
աչքերին: Սարսափ ա գգում շնպահ Յերմիլը. չեմ հի-
շում, չեմ տեսած, ասում ա, վոր փոխարն եղպես
մարդու աչքերի նայի. բայց, փոչինչ. սկսում ա ձեռը
քսել դրա բրդին ու «գառնուկա, գառնուկա» ասել: Իսկ
փոխարը հանկարծ ատամները զնջրտացնում ա ու ին-
քն էլ Յերմիլին՝ «գառնուկա, գառնուկա»...

Պատմողն իր վերջին խոսքը գեռ չեր ավարտել,
յերբ հանկարծ յերկու շունն էլ միանգամից վեր
թռան, հաջոցով նետվեցին կրակից գենը և չքացան
խավարի մեջ: Բոլոր տղաները վախեցան: Վանյան վեր
թռավ իր ճիւղպի տակ: Պավլուչան ճչալով վազեց
չների յետևից: Նրանց հաջոցն արագ հեռանում եր...
Լսվեց խրտնած ձիերի անհանգիստ վազքը: Պավլու-
չան բարձր կանչում եր. «Բողա՛ր, Ժուչկա»... Մի քանի
րոպեյից հետո չների հաջոցը լռեց. Պավլուչայի ձայնը
գալիս եր արդեն հեռվից... Անցավ ելի մի փոքր ժա-
մանակ: Տղաները տարակուսած նայում էին իրար,
սպասելով կարծես, թե ի՞նչ է լինելու: Հանկարծ վա-
զող ձիու դուրյուն լսվեց. նա միանգամից կանգ առավ
հենց խարույկի մոտ և, նրա բաշը բռնած, նրա մեջ-
քից ցած թռավ Պավլուչան: Ծները նույնպես յեկան
մտան լույսի շրջագիծը և իսկույն նստեցին՝ կարմիր
լեզուները հանած:

— Ի՞նչ կար, ի՞նչ ա պատահել, — հարցրին
տղաները:

— Վռչի՛նչ, — պատասխանեց Պավլուչան, ձեռը
թափ տալով ձիու վրա, — ենպե՛ս, չներն ինչ-վոր հոտ
առան: Կարծեցի գել ա, — ավերացրեց նա անտարբեր
ձայնով, կրծքովը մեկ արագ շնչելով:

Յես ախմա հիացա Պավլուչայով: Նա շատ լավն
եր այդ րոպեյին: Նրա տղեղ դեմքը, վոր կենդանացել
եր ձի նստելուց, վառվում եր համարձակ քաջու-
թյամբ և վճռականությամբ: Առանց ձեռնափայտի,
դիչերը, առանց տատանվելու, նա մեն-մենակ վազեց
գալլի վրա... «Ի՛նչ հիանալի տղա յե», — մտածում
էյի յես, նրան նայելով:

— Իսկ չները տեսա՞ն եղ գելերին, — հարցրեց
վախկոտ Կոստյան:

— Եստեղ գել շատ կա, — պատասխանեց Պավլու-
չան, — բայց նրանք միայն ձմեռն են անհանգստաց-
նում:

Նա կրկին թիկն տվեց խարույկի առաջ: Գետնին
նստելով՝ նա ձեռը գցեց չներից մեկի բրդոտ վիզը,
և ուրախացած կենդանին գլուխը յերկար չեր թեքում,
յերախտագիտական հպարտությամբ կողքանց Պավ-
լուչային նայելով:

Վանյան դարձյալ մտավ իր ճիւղպի մեջ:

— Իսկ դու, Իլյուչա, ինչ-վոր սարսափելի բան
էյիր պատմում, — խոսեց Ֆեդյան, վորը, վորպես հա-
բուստ գյուղացու վորդի, առաջնախոսի դեր եր կա-
տարում (նա ինքը խոսում եր քիչ, կարծես վախենում
եր արժանապատիվությունը քցել), — չները հաջացին,
յանգարվեց... Ճիշտ վոր, լսել եմ. եղ տեղն, ասում
են, շատ վատ տեղ ա...

— Վարնավիցի՞ն... Իհարկե՛. են էլ ինչքա՛ն:
Ենտեղ, ասում են, գեղացիք շատ անգամ են տե-
սել իրենց ծեր, մեռած աղային: Ման ա գալի, ասում
են, յերկարափեչ կաֆտան հագած ու մի գլուխ ախ ու
վախ ա անում, ինչ վոր բան ա փնտռում գետնի յերե-
սին: Մի անգամ Տրոֆիմիչ պապը հանդիպում է նրան,
թե՛ աղա, Իվան Իվանիչ, եղ ի՞նչ ես փնտռում:

— Տրոֆիմի՞չն ա հարցնում նրան, — զարմացած
ընդհատեց Ֆեդյան:

— Հա՛, նա ա հարցնում:

— Այ, դրանից հետո զուգադ կասեմ Տրոֆիմի-
չին... Ե, բա նա ի՞նչ ա ասում:

— Կախարդական խոտ եմ վնասում, ասում ա:
Ու խոտում ա ենպես խուլ, ձենը փորը քցած.—
կախարդական խոտ: Իսկ քու ինչի՞ն ա պետք, աղա,
եղ կախարդական խոտը: Ճնշում ա, ասում ա, գերեզ-
մանս ճնշում ա, Տրոֆիմիչ. ուզում եմ դո՛ւրս գամ,
դո՛ւրս...

— Տես հլա, — նկատեց Ֆեդյան, — կարծես քիչ ա
ապրել:

— Ինչ դարձանք բան ա, — խոսեց Կոստյան, — յես
կարծում եյի, մեռելներին կարելի ա մենակ մեռելո-
ցին տեսնել:

— Մեռելներին կարելի ա ամեն սհաթ ել տես-
նել, — համոզված վրա բերեց Իլյուչան, վորը, վորքան
կարողացա նկատել, բոլորից ավելի լավ գիտեր գյու-
ղական հավատալիքները... — Իսկ մեռելոցին կարող
ես տեսնել են կենդանի մարդկանց ել, ովքեր մեռնելու
յեն, այսինքն՝ ո՛ւմ հերթն յեկել ա եղ տարի մեռնելու:
Բավական ե միայն մարդ գնա-նստի յեկեղեցու գավ-
թում ու բոլոր ժամանակ ճամփին նայի: Նրանք կը-
գան կանցնեն ճամփով, այսինքն՝ նրանք, ո՛վքեր եղ
տարի պիտի մեռնեն: Մեր գեղում՝ անցած տարի պա-
ռավ Ուլյանան գնացել եր յեկեղեցու գավթում նստել:

— Հետո մեկն ու մեկին տեսե՞լ եր, — հետաքրք-
րորությամբ հարցրեց Կոստյան:

— Վո՞նց չե: Առաջ հլա մի յերկար նստում ա,
վո՛չ մարդ ա տեսնում, վո՛չ բան ա լսում... Միայն
կարծես ինչ-վոր մի տեղ մի փոքրիկ շուն ա հաջում...
Մեկ ել տեսնում ա՝ ճամփով մի տղա ա գնում
մեռակ չապկով: Նայում ա տեսնում՝ Իվաչկա Ֆեդո-
սեվն ա...

— Են, վոր գարունքը մեռա՞վ, — ընդհատեց Ֆե-
դյան:

— Նա ինքը... Գնում ա ու գլուխն ել չի բարձ-
րացնում... Բայց Ուլյանան ճանաչում ա նրան...

Իսկ հետո նայում ա, տեսնում ա մի կնիկ ա դալի:
Հավ մտիկ ա անում, մտիկ անում—ո՛, տեր աստ-
ված — նա ինքն ա զալիս ճամփով, ինքը Ուլյանան:

— Ի՞նքը, — հարցրեց Ֆեդյան:

— Աստված վկա, ինքը:

— Հետո ի՞նչ. չե՞ վոր նա դեռ չի մեռել:

— Ախր տարին ել դեռ չի անցել: Բայց դու հլա
մի նրան լավ նայիր. քիթը բռնես՝ հոգին կտա:

Բոլորը դարձյալ լռեցին: Պավլուչան մի բուռ չոր
ցախ գցեց կրակի վրա: Սևացան նրանք հանկարծ
բռնկած բոցի վրա, ճարճատեցին, ծխացին, ծովեցին՝
վառվող ծայրերը բարձրացնելով: Լուսի անդրա-
դարձումը, դողդողալով, ընկավ բոլոր կողմերի վրա:
Հանկարծ վորտեղից — վորտեղ մի ձերմակ աղավնի
յեկավ ուղիղ այդ անդրադարձումի վրա, վախեցած
պտույտ դարձեց միևնույն տեղում, ամբողջովին տաք
լույսով վողողված, ու չքացավ, թևերը զրնդացնելով:

— Յերևում ա տնից յետ ա ընկել, — նկատեց
Պավլուչան: — Հիմի թռչելու ա, մինչև մի բանի դեմ
կառնի, ու վորտեղ դեմ առնի, ենտեղ ել գիշերը կմնա
մինչև առավոտ:

— Սա, Պավլուչա, — խոսեց Կոստյան, — ինչպես
յերևում ա, արդար հոգի չեը, վոր յերկինք եր թռել,
հը՞:

Պավլուչան մի քանի ցախ ել գցեց կրակի վրա:

— Շատ կարելի ա, — ասաց նա վերջապես:

— Ասա մի տեսնեմ, Պավլուչա, — սկսեց Ֆե-
դյան, — ձեր գեղո՞ւմ ել տեսաք արևի խավարումը:

— Վո՞նց չե:

— Դուք ել վախեցա՞ք:

— Ինչո՞ւ մենակ մենք: Մեր աղեն, վոր առաջ մեղ
հասկացնում եր, թե խավարում ա ըլելու, հենց վոր
խավարումն ելավ՝ ինքը, ասում են, ենքան վախեցավ,
վոր տեսնելու բան եր. իսկ նրա տան կերակուր յեփող
կնիկը, հենց վոր խավարումն ըլում ա, փետը վերց-
նում ա ու կերակրի բոլոր բղուղները ջարդում փեչի

մեջ*) . «եւ ո՞վ պտի ուտի», ասում ա, «աշխարհիս վերջը յեկավ»... Իսկ մեր գեղում, ախպեր ջան, ենպես բաներ եյին ասում, վոր. թե՛ մթամ, սպիտակ գերեր են դուրս գալու, մարդկանց ուտելու յեն, մարդակեր զչեր են գալու, ու ինքը՝ Տրիշկան**) եւ յերեւելու ա մարդկանց աչքին:

— Եդ Տրիշկան ո՞վ ա, — հարցրեց Կոստյան:

— Բա գիտես վո՞չ, — տաքացած վրա բերեց Իւլուշան: — Ուրեմն աշխարհից անդետ մարդ ես, վոր չես իմանում Տրիշկան ո՞վ ա: Դա մի ենպես զարմանալի մարդ ա, վոր գալու ա. գալու ա, ու նրան վոչ կարելի ա բռնել, վոչ եւ կարելի ա մի բան անել. եղպես զարմանալի մարդ ա ըլելու: Կուզենան, որինակ, քրիստոնյաները նրան բռնեն. փետեր վերցրած կերթան նրա վրա, կըջապատեն, բայց նա խաբս կտա, ենպես խաբս կտա, վոր մարդիկ կսկսեն իրար ջարդել: Բանտ դնեն նրան, ասենք, — նա ջուր կուզի մի ունկավոր ամանով. ջուր կրերեն եդ ունկավոր ամանով: Նա իրեն կքցի եդ ջրամանը, դե հիմի տղա յես արի նրան գտի: Վտաները չղթա կդնեն. նա ձեռները կխփի իրար — չղթաներն իսկուշն կընկնեն վտաներից: Ու կերթա եդ Տրիշկան գեղեր ու քաղաքներ ու կսկսի գլխահան անել քրիստոնյա ժողովուրդին... Իսկ նրան գժվար կըլի ձեռ տալ... Եղպես մարդ ա ըլելու եդ զարմանալի, խորամանկ մարդը:

— Հա, — շարունակեց Պավլուշան իր դանդաղ ձայնով, — եղպես: Դրան եւ սպասում եյին մեր գեղում: Ծերերն ասում եյին, թե հենց վոր յերկրնքի խավարումն սկսվի — են ժամանակ Տրիշկան կգա: Խավարումն սկսվեց: Ամբողջ ժողովուրդը դուրս թափվեց փողոցն ու հանդը. սպասում են, տեսնեն ի՞նչ ա ըլելու: Իսկ մեր տեղը, վոնց վոր գիտեք, բաց աւեղ ա, ամեն ինչ յերեւում ա: Մտիկ են անում —

*) Ռուսական գյուղերում կերակուրը յեփում են մեծ մասամբ փեչի մեջ բոլորներով:

**) Տրիշկան նեւի մոտավոր գաղափարն է (Ծանոթություն թարգմանչի):

մեկ եւ տեսնում են գեղի ե՛րեն ծերերից, բլրի գլխից մի մարդ ա գալի, մի զարմանալի գլխով մարդ... Բոլորը ծղրտում են. «վա՛յ, Տրիշկան գալիս ա, վա՛յ, Տրիշկան գալիս ա», ու փախչում են դեռ ու դեն: Մեր տանուտերը մտնում ա առուն, նրա կնիկը մտնում ա դարպասի փետի տակ, բայց դեմ ա առնում. եւ չի կարում վոչ յես գնա, վոչ առաջ, ու ենպես ա ճչում, վոր իրենց շունը կապը կտրում ա ու չափարի վրայով փախչում, անտառն ընկնում. իսկ Կուզկինի հերը՝ Դորոֆեյիչը իրեն քցում ա վարսակի մեջ ու սկսում ա լորի ձեն հանել, թե «չատ կարելի ա թռչունին իրնայի եդ մարդակերը»: Եղպես իրար գլխով են դիպչում բոլորը... Բանից պարզվում ա՝ յեկողը տակառազոր՝ Վալիլան ա. փայտե ամեն ա առել, ու եդ դատարկ ամանը գլխին դրել:

Բոլոր տղաները ծիծաղեցին ու դարձյալ լռեցին մի բոսի, ինչպես դա հաճախ պատահում է բաց ողում գրուցող մարդկանց հետ: Նայեցի չորս կողմս. հանդիսավոր գիշեր եր արդեն. ուշ յերեկոյի խոնավ թարմությանը փոխաբինել եր կես գիշերի շոր տաքությունը. դեռ շատ ժամանակ կար մինչև լուսադեմի ցողը: Լուսին չկար յերկնքում. նա այդ պահին ուշ եր դուրս գալիս: Անթիվ վոսկեցուռն աստղերը, թվում եր, հանդարտ, առկայծելով բոլորը հոսում-դնում են դեպի Հարդադողի ճանապարհը. և իսկապես, նայելով նրանց, դուք ինքներդ կարծես զգում եյիք յերկրագրնդի փութկոտ, անկանգ վազքը... Հանկարծ մի տարրինակ, սուր, հիվանդազին ձիչ լավեց՝ յերկու անգամ իրար յետեից, — գետի կողմից և, մի քանի ակնթարթ հետո, կրկնվեց հեռվում...

Կոստյան ցնցվեց... «Ի՞նչ եր»:

— Դա ձկնակուլին ա — հանդիստ պատասխանեց Պավլուշան:

— Ձկնակուլի՞ (ձկնկուլ), — կրկնեց Կոստյան...

— Իսկ են ի՞նչ կլեր, Պավլուշա, վոր յերեկ իրի-
կուհ լսեցի,— ավերացրեց նա, քիչ լռելով,— գուցե
խմանա...

— Ի՞նչ ես լսել:

— Ա՛յ ինչ լսեցի: Կամեննի Գրյադից գնում էյի
Շաշկինո. առաջ հլա գնում էյի մեր կաղնուտով, հետո
գնացի դաշտով — գիտես, են տեղը, վոր ճամփեն
ծովում ա հանկարծ,— ենտեղ չե՞ վոր մի մեծ փոս
կա՝ դարունքի ա անձրևի ջրով լիքը. գիտես, նրա չարս
կողմն ել դամիչ ա բռնել— բարձրացել. եսպես գնում
եմ, ախպեր ջան, եղ փոսի կողքով, հանկարծ մի նախ
ա գալի գյուլից, ենպես տխուր, ենպես վողբալի ձե-
նով՝ ո՛ւ, ո՛ւ... ո՛ւ-ո՛ւ... ո՛ւ-ո՛ւ... Սարսափը
ջանս կալավ, տղեք. ժամանակն ուշ ա ու եղ ձենն ե՛ն-
պես տխու՛ր: Քիչ եր մնում ինքս ել լաց ըլեմ... Սա
ի՞նչ կըլեր, հը՞:

— Հեռու չե մեկել տարին՝ գողերը անտառապա՛հ
Ակիմին քցել էյին եղ գյուլը, խեղդել, — նկատեց Պավ-
լուշան,— շատ կարելի ա նրա հոգին ա եղպես նվում:

— Բայց ախր, տղեք,— խոսեց Կոստյան իր,
առանց աջն ել խոշոր աչքերը չռելով:— Յես չեյի իմա-
նում, վոր Ակիմին եղ գյուլումն են խեղդել, թե չե
շատ կվախենայի:

— Մեկ ել, ասում են, վոր կան մի տեսակ պսուլիկ
գորտեր,— չարունակեց Պավլուշան,— վորոնք եղպես
տխուր ձեն են հանում:

— Գորտե՞ր. ե՛, չե՛, դրանք գորտեր չեն... (ձկրն-
կուլը կրկին ճչաց գետի վրա):— Տե՛ս,— տկոմա ա-
սաց Կոստյան,— վոնց վոր սատանա ծղրտա:

— Սատանեն ձեն չի հանում, նա համը ա,— վրա
բերեց Իլյուշան.— նա մենակ ծափ ա տալի ու բլբլաց-
նում:

— Իսկ դու սատանա տեսե՞լ ես, ի՛նչ ա,— հեզ-
նանքով ընդմիջեց նրան Ֆեդյան:

— Չեմ տեսել, ասոված հեռու տանի. բայց ու-
րիշները տեսել են: Ես քանի ուրը դա մեր գեղացիներ-



Վանյան

բից մեկի առաջը կտրում ա. պտտում ա դրան անտա-
ռում, պտտում ա, ու բոլոր ժամանակ մի թալի (բա-
ցուտի) չորս կողմը... Լուսպեծին գործվ ազատվում
ա եղ մարդն ու տուն դալի:

— Ե, եղ մարդը տեսե՞լ ա:

— Տեսել ա: Ասում ա կանգնել եր մեծ, մեծ, սև,
ծառի յետևը ծածկված. լավ չես ջոկում, կարծես
լուսնյակից ա թաղնվում ու նայում ա, նայում ա հա-
ղին աչքերով, նայում ա ու աչքերը բաց ու խուփ
անում...

— Ո՛ւհ,— բացականչեց Ֆեդյան, թեթևակի
ցնցվելով և ուտերը ծուլ անելով.— Թո՛ւ...

— Մարդ իմանա եղ դարչելին ինչի՞ ա աչխարհ
յեկել,— նկատեց Պավլուչան:

— Ուշուց մի՛ տալ. մեկ ել տեսար լսեց,— նկա-
տեց Իլյուչան:

Դարձյալ լուսթյուն տիրեց:

— Տեսե՛ք, տեսե՛ք, տղեք,— լավեց հանկարծ Վա-
նյայի մանկական ձայնը,— մտիկ արեք աստղերին.
վոնց վոր մեղունները ձաղ (պար) տան:

Նա իր թարմ փոքրիկ դեմքը հանեց ճիւղպի տա-
կից, հենվեց բռնեցքին և դանդաղ վեր բարձրացրեց իր
խոշոր խոնարհ աչքերը: Մյուս տղաներն ել իրենց աչ-
քերը բարձրացրին յերկինք և յերկար նայեցին աստղե-
րին:

— Հը, Վանյա,— սիրալիբ հարցրեց Ֆեդյան,—
քերդ (քույրդ) Անյուտկան առո՞ղջ ա:

— Առողջ ա,— պատասխանեց Վանյան, փոքր ինչ
կակաղելով:

— Նրան ասա՛ ինչո՞ւ մեղ մոտ չի դալիս...

— Չեմ իմանում:

— Դու նրան ասա, թող դա:

— Կասեմ:

— Դու նրան ասա, վոր յես նրան նվեր կտամ:

— Իսկ ի՞նչ:

— Քեզ ել կտամ:

Վանյան հոգոց քաշեց:

— Չե, ինձ հարկավոր չե: Ավելի լա՛ւ ա Ի՛րան
տուր. նա շատ խելոք, բարի աղջիկ ա:

Յեվ Վանյան դուռին ելի դրեց դեռնին: Պավլու-
չան վեր կացավ և դատարկ կաթսան ձեռն ատավ:

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց Ֆեդյան:

— Գետը՝ ջրի, ծարավ եմ, ուզում եմ խմեմ:

Շները վեր կացան ու գնացին նրա յետևից:

— Տես, գետը չընկնես,— ձայն տվեց Իլյուչան
նրա յետևից:

— Ինչո՞ւ պտի ընկնի վոր,— ասաց Ֆեդյան,—
կղզուչանա:

— Հա, կղզուչանա: Ամեն բան պատահում ա. նա
կկռանա ջուր վերցնելու, իսկ ջրի փերին ձեռը կբռնի
ու կքաշի իրա մոտ: Հետո կսկսեն, թե տեսեք, խեղճը
ջուրն ընկավ... Ի՞նչ ընկնել, ի՞նչ բան... Հրե, դա-
միչների մեջ մտավ,— ավելացրեց նա ականջ դնելով:

Յեղեղները, խկապես, յետ գնալով խշշացին:

— Իսկ ճի՞շտ ա,— հարցրեց Կոստյան,— վոր շաչ
Ակուլինան խելքը յես ա տվել են որվանից, յերբ ջրի
մեջ ա ընկել:

— Հա՛, եղ որվանից ա... բայց ասում են, առաջ
սիրուն ա եղել: Ջրի քաջքն ա նրան փչացրել: Կարծել
ա ջրից շուտով չեն հանիլ: Ու իրա տեղը, ջրի տակին
փչացրել ա նրան:

(Յես ինքս մի քանի անգամ պատահել եմ այդ Ա-
կուլինային: Յնցոտիադատ, սարսափելի նիհար, ա-
ծուխի պես սև դեմքով, պղտոր նայվածքով և մշտա-
պես ատամներն իրար կցած՝ ժամերով պտտվում և
միևնույն տեղը, ճանապարհի վրա, վոսկրացած ձեռ-
ները կրծքին սեղմած, և դանդաղորեն մի փոտից մյուս-
սին և հենվում, ինչպես վայրի դադանը վանդակում:
Նա մարդկանց ասածից բան չի հասկանում, և
յերբեմն միայն քրքջում և ջղաձգարար):

— Բա ասում են,— շարունակեց Կոստյան,— Ա-

կուլինան նրա համար ե ջուրն ընկել, վորովհետեւ բի-
րեկանը խարել ա նրան:

— Հենց դրա համար:

— Իսկ Վասյային հիշո՞ւմ ես,— տխրությամբ ա-
վելացրեց Կոստյան:

— Ի՞նչ Վասյա,— հարցրեց Ֆեդյան:

— Են, վոր խեղդվեց,— պատասխանեց Կոստյան,
— այ հենց ես գետում: Ի՞նչ տղա յեր. ա՛խ, ի՛նչ տղա
յեր: Իսկ մերը՝ Ֆեկլիստան վո՛նց եր սիրում նրան—
Վասյային: Ու կարծես զգում եր Ֆեկլիստան, վոր
տղեն ջրով ա մեռնելու: Պատահում եր, Վասյան դա-
լիս եր մեղ հետ ամառը գետում լողանալու— մերն ի-
րեն ուտում եր, ձեռն ու վռաը դող եր ընկնում: Ուրիշ
կնանիք—վոչի՛նչ, գնում եյին իրենց բանին, իսկ Ֆեկ-
լիստան ձեռի տաշար գնում եր գետնին ու սկսում եր
կանչել. «Յետ արի, յետ արի, աչքիս լույս, յետ արի,
թառլան ջան»:— Թե ինչպես ջուրն ընկավ խեղդվեց,
աստված գիտի: Նա խաղալիս ա լինում գետի ափին,
մերն ել եղտեղ խոտ ա հավաքում. հանկարծ լսում ա,
վոր մեկը կարծես փուչիկներ ա բաց թողնում ջրի յե-
րեսին,— նայում ա տեսնում— մենակ Վասյայի գլա-
կըն ա լողում ջրի յերեսին: Ա՛յ եղ ուրմանից ել Ֆեկ-
լիստայի խելքը գլուխը չի գալի.— գալիս ա ու պառ-
կում են տեղը, վորտեղ խեղդվել ա տղեն. պառկում
ա, տղերք ու յերգում, հիշո՞ւմ եք, Վասյան միշտ
եղպես յերգ եր ասում,— մերն ել նրա յերգած յերգն
ա ասում ու լաց ըլում, լաց ըլում, դառը գանգատ
անում ասածուն...

— Հրե Պավլուչան գալիս ա,— ասաց Ֆեդյան:

Պավլուչան, ջրով լիքը կաթսան ձեռին, մոտեցավ
կրակին:

— Հը, տղե՛ք,— սկսեց նա,— բանը վա՛տ ա:

— Ի՞նչ կա,— շտապ հարցրեց Կոստյան:

— Վասյայի ձենը լսեցի:

Բոլորը ցնցվեցին:

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում,— թոթովեց
Կոստյան:

— Աստված վկա: Կոստյա ջուր վերցնեմ թե չե,
լսում եմ՝ հանկարծ կանչում են Վասյայի ձայնով ու
կարծես ջրի տակից. «Պավլուչա՛, այ Պավլուչա՛, արի
եստեղ»: Յետ դարձա: Բայց ջուրը վերցրի:

— Ո՛հ, տե՛ր աստված, տե՛ր աստված,— ասացին
տղաները, խաչակնքելով:

— Եղ քեղ ջրի քաջքն ա կանչել, Պավլուչա,— ա-
վելացրեց Ֆեդյան:— Իսկ քիչ առաջ մենք հենց Վա-
սյայի մասին եյինք խոսում:

— Ե, դա վատ նշան ա,— ծոր տալով ասաց Ի-
լյուչան:

— Վոչինչ,— ասաց Պավլուչան վճռական և նրա-
տեց դարձյալ,— ինչ վոր մարդու ճակատին դրած ա—
են ել կըլի:

Տղաները ձայները կտրեցին: Յերեում եր, վոր
Պավլուչայի խոսքերը խոր տպավորություն թողին
նրանց վրա: Նրանք սկսեցին կրակի առաջ շոր-բան
փռել, կարծես պատրաստվում եյին քնելու:

Պավլուչան ախանջ դրեց:

— Եղ վիրու (վայրի) հավերն են թռչում. նրանց
ձենն ա:

— Ո՞ւր են թռչում:

— Ենտեղ, ուր, ասում են, ձմեռ չի ըլում:

— Բա եղպես յերկիր կա՞:

— Կա:

— Հեռո՞ւ ա:

— Հեռո՞ւ, հեռո՞ւ ա, տաք ծովերից դենը:

Կոստյան հոգոց քաշեց ու աչքերը փակեց:

Յերեք ժամ եր անցել արդեն, ինչ յեկել—նստել եյի
տղաների մոտ: Լուսինը դուրս յեկավ, վերջապես յես
նրան անմիջապես չնկատեցի— այնքան փոքր եր: Այդ
անլուսին գիշերը թվում եր ելի այնպես սքանչելի,
ինչպես առաջ... Բայց դեպի յերկինք եյին խոնարհում
արդեն շատ աստղեր, վոր քիչ առաջ բարձր կանգնած

եյին յերկնքում. չորս կողմն ամեն ինչ լուել եր բոլորովին, ինչպես սովորաբար ամեն բան լուում է միայն առավոտյան դեմ. ամեն ինչ քնել եր լուսադեմի ամուր անշարժ քնով: Ողում այլևս սուր բուրումներ չկային, —նորից կարծես խոնավություն եր տարածվել... Կարճատև են ամառվա գիշերները... Տղաների գրույցները մարեցին խարույկների հետ միասին... Շներն անգամ ննջում եյին. ձիերը, վորքան կարողացա ջուկել աստղերի թույլ լույսով, նույնպես պաւկել եյին և գլուխները քաշ գցել... մի տեսակ մոռացություն յեկավ վրաս, վոր հետո փոխվեց նինջի:

Մի թարմ հոսանք դիպավ յերեսին: Աչքերս բաց արի— առավոտը բացվում եր: Արշալույսի կարմրությունը դեռ չեր յերևում վաղ մի տեղ, բայց արեւելքն արդեն սպիտակին եր տալիս: Չորս կողմն ամեն ինչ յերևում եր, թեև անորոշ: Գունատ-մոխրագույն յերկինքը պայծառանում եր, զովանում, կապույտին տալիս. աստղերը մերթ թարթում եյին թույլ լույսով, մերթ չքանում. գետինը խոնավացավ, տերևները քրտնեցին. տեղ-տեղ կենդանի հնչյուններ, ձայներ լսվեցին, և վաղորդյան դեփյուռը վեր կացավ արդեն չրջելու և թռչկոտելու: Թեթև, ուրախ դող անցավ մարմնովս: Արագ վեր կացա ու գնացի դեպի յերեսաները: Նրանք մեռածի պես քնած եյին անբոց վառվող խարույկների շուրջը: Մենակ Պավլուչան վեր կացավ կիսով չափ ու աչքերը հռեց վրաս:

Յես գլխով արի նրան ու ճամփա ընկա շամանդաղով ծածկված գետի յերկարությամբ: Հագլիվ հեռացել եյի յերկու վերստ, յերբ շուրջս արդեն— թե ընդարձակ թաց մարգագետինը, թե կանաչին տվող բլուրները, անտառից անտառ, թե յետևս գտնվող յերկար փոշոտ ճանապարհը, թե գետը, վոր ամոթխած կապույտին եր տալիս նոսրացող շամանդաղի տակ, — վողոգվեցին ջահել, ջերմ լույսի նախ ալ, ապա կար-

միր ու վոսկեղույն ճառագայթների հոսանքով... Ամեն ինչ շարժվեց, դարձան յերգեց, աղմկեց, լեզու առավ: Ամեն տեղ շողարձակ ալմասներով կարմրեցին ցողի խոշոր կաթիլները. դեմիցս լսեցի առավոտյան դանդերի պարզ, պայծառ ձայներ, վոր նույնպես կարծես լվացվել-մաքրվել եյին առավոտյան զովից, և հանկարծ կողքովս սրընթաց անցավ հանգստացած ձիերի թաբունը, վորոնց քում եյին իմ ծանոթ տղաները...

Յես, ցավելով, պիտի ավելացնեմ, վոր այդ տարի Պավլուչան մեռավ: Նա ջրում չխեղդվեց, այլ ձիուց ընկավ ու մեռավ: Ափսո՛ս, հիանալի տղա յեր:

1851 թ.



Պատ. խմբագիր՝ Մ. Կորյուն
Տեխ. խմբագիր՝ Ս. Գասպարյան
Սրբագրել է՝ Թ. Հովակիմյան
Կոնսերուր արագրել է՝ Ս. Շահբաղյան

Գլավիտի լիագոր՝ Դ—3523 Հրատ. № 4234.

Պատվեր 84. Տիրած 4000.

Թուղթ 62×94 Տպագր. 2 մամ.

Մեկ մամ. 24.480 տիշ. Հեղինակ. 1 մամ.

Հանձնված է արտագրության 20 հունվարի 1938 թ.

Ստորագրված է տպագրության համար 13 ապրիլի 1938 թ.

Գին՝ 60 Կ.

Պետհրատի 1 տպարան, Յերեվան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0391417

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

336

5498

И. ТУРГЕНЕВ
БЕЖИН ЛУГ
ГИЗ АРМ. ССР, ЕРЕВАН

891.715
5 - 96